

Վ. ԲԴՈՅԱՆ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԵՍԵՐԻ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳԻՐ, ԳՐԱՆՑՎԱԾ 14-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Մատենագարանի № 3937 ձեռագիրը քերականական, խրատական, մելնողական ու քարողչական նյութերի ժողովածու է, ընդօրինակված Հայոց ՊԺԹ (1370) թվականին։ Չեռագրի վերջին՝ 192ր—196ր էջերի վրա, մի այլ դրիչ, նույնպիս 14-րդ դարի վերջերին, ընդօրինակել է անհոյտ հեղինակի մի քարող, որը ազգագրական ուշագրավ նյութեր է պարունակում։

Քարողի հեղինակը իր առաջ նպատակ է դրել հայ հարսանեկան ծեսերն ու սովորույթները, որոնք ձևավորվել էին հազարամյակներ առաջ, մելնաբանել քրիստոնեական եկեղեցու դիրքերից և, «համեմատություններ» ու «զուգահաններ» անց կացնելով, ցույց տալ, որ, իր, այդ ծեսերի հիմքում ընկած են եկեղեցական ու աստվածաբանական պատկերացումներ։ Այս տեսակեաից անվերնագիր այդ քարողը դուրկ է որևէ արժեքից։

Սակայն հեղինակը իր նպատակից ելնելով, քարողի յուրաքանչյուր նոր պարբերություն սկսում է հայ հարսանեկան սովորույթների հերթական դրվագների նկարագրությամբ և նոր միայն անցնում է այդ դրվագների մելնությանը։ Հարսանեկան սովորույթների ցիկլի նկարագրությունը, շնորհիվ այն բանի, որ ձեռագրի վերջից ընկել են թերթեր, մնում է անավարտ։ Սակայն պահպանված պատառիկները, գրանցված լինելով 14-րդ դարի վերջերին՝ մեծ արժեք են ներկայացնում։

Հայտնի է, որ հարսանեկան սովորույթների ուսումնասիրման համար հայ ազգագրագիտության տրամադրության տակ կան միայն 19—20-րդ դարերում կատարված նկարագրություններ և պահնձին, սակավաթիվ ու անբավարար, ակնարկներ նախորդ դարերից հասած մատենագրական երկերում։

Մատենագարանի № 3937 ձեռագրի մեջ պահպանված նկարագրությունը, լինելով ամենահինը և լրիվը, հնարավորություն է ընձեռելու մասնագետներին՝ ուսումնասիրել հայկական միջնադարի հարսանեկան ծեսերն ու սովորությունները և, համեմատելով դրանք 19—20-րդ դարերում կատարված նկարագրությունների հետ՝ ցույց տալ այն փոփոխությունները, որ տեղի են ունեցել այդ ծեսերում 14-րդ դարից հետո ընկած ժամանակաշրջանում։

Հրատարակվող հատվածները հատկապես ուշագրավ են այն տեսակեաից, որ վկայություն են պահպանել կնոջ գնման (գլխագնի) ժամին։ Պարզ գումար է, որ 14-րդ դարում հայկական ամուսնական ծեսերի մեջ ասկավին պահպանվում էին պատրիարքական սովորույթներ։

Ուշադրության արժանի է նաև առևտնագման հարցին վերաբերող վկայությունը: Մի կողմից գյուղամիջյան ամուսնության գելքում պատկվազներին եկեղեցի տաճելու միջոցին ձիավոր ուղեկիցների հանդես գալը (ձեռագիր, էջ 195ա) և մյուս կողմից եկեղեցուց ամուսնացողներին դուրս բերելիս աջ ու ձախ կողմերից սրերով պաշտպանելու սիմվոլիկ ծեսը (ձեռ. էջ 196ա), առևտնագմամբ ամուսնության մնացուկի հետաքրքրական վկայություններ են հանդիսանում: Սրան իրեն լրացնող և հակընդդիմ վկայված է, որ հարսնաուի մասնակիցներին հետապնդում էին աղջկա համայնքի մարդիկ, որոնք սովորույթի համաձայն չխորհրեն ինչու և ոչ թողուն (երթալ) մինչև առնուն» (ձեռ. էջ 196բ):

Հարսանեկան սովորույթներին վերաբերադ քննարկվող նյութերի արժեքը հայկական ընտանեկան հարաբերությունները հանգամանորեն ուսումնասիրելու ականակետից՝ ակնհայտ է, ուստի մի կողմ թողնելով քարոզի եկեղեցական հեղինակի բռնազրութիկ տոտվածարանական մելքությունները, այսուեղ ներկայացնում ենք քարոզի բոլոր այն հատվածները, որոնք պարունակում են հարսանեկան ծեսերի մասին վկայություններ:

Բ Ն Ա Գ Ի Ր

193ա Արդ, նախ սովորութիւն է ազգաց փեսային՝ խնդրել հարսն: Եւ կրկին կերպիւ ընտրեն՝ նախ ի յիւրեանց հաւատոյն, թէ հայ քրիստոնեայ է և թէ այլ քրիստոնեայք, և ազա ի մէջ նոցա յընտիր և պատուական ազգէ մեծատանց և յազատաց, զի գոն աղքատ և զսեհիկ հայք....

193բ ...Այսպէս թէ ընտրեսցին քրիստոն[է]այքն զհաւատովն և զողորմածն և սրբեալ ամուսնութեամբն ընտրեսցեն, զի եղիցին նման բարձրելոյն, որ առ Արքահամ: Եւ ետեւ, զի ազգականքն ընտրեն և ոչ փեսայն....

Երկրորդ. Սովորութիւն է, զի յետ ընտրութեանն երթալ խաւսին և տան թառ գինի ի հայր և ի մայր հարսինն, և կամ ի համանամանո նոցին....

Երրորդ. Սովորութիւն է՝ յամենայն տաւնի և տարեկանաց գնալ ի տուն հարսինն ընծայիւք և կերակրովք: Զայս արար աստուած ի յաւրէն յայնմանէ, որ հաճեցաւ յԱրքահամ և ի Սովոչս, յամենայն դարու և ի ժամանակի տաքէք մարդարէս բանիւ և մարդարէութեամբ, նշանօք և արուեստիւք: Դասն որոյ և եկեղելքն ի տուն հարսինն, պարտին նմանիւ մարդարէիցն, զի կարօսցեն տ[ալ] և հաշտեցուցանել զաւար ազդիսն առ փեսայն:

Չորրորդ. Սովորութիւն է՝ գնալ քահանայիցն և տանել նշան և այն մատանի կամ ապարանջան կամ գինդ, որ ետ պատրումն, և կնիք առ հարսն և ի կամս նորա, մինչ զի այլ ոչ գոյ հնար քակել նոցա ի միմեանց....

194ա Հինգերորդ. Զի յետ նշանացն սովորութիւն է առնել պատրաստութիւն հարսանեացն և տալ զաւժիտան՝ հաց և միս [և] գինի և այլ ոչ ինչ, զի աւելի ինչ խնդրելն յանաւրինացն է....

Իսկ վեցերորդն. Կոտարի սովորութիւն ի ժամանակ հարսանեացն, որպէս և Քրիստոսի՝ ի ժամ խաչելութեանն: Եւ զի յերեկոյին ժամուն առնեն հալուէս Դ գունով՝ կարմիր և դեղին, կանաչ և սպիտակ: Եւ զնանգերձն փեսային և հարսին ի վերայ եղեալ տանիս նախ ի տուն հարսինն: Բայց դհարսինն զամենայն ինչ մերկացուցանեն ի նմանէ և ապա զնորն սգեցուցանեն, իսկ փեսային ոչ հանեն, այլ ի վերայ հնոյն զնորն սգեցուցանեն....

194_ր Իսկ երեսերորդ. Զի ի ժամ հարսանեացն հրաւիրակ առաքին ի տուն հարսին՝ տալ աւետիս գալոյ հարսանեացն, զոր դեղջուկըն աղուէս կոչեն՝ վտան թագնարար գալոյն....

195_ա Ուրերորդ. Զի սովորութիւն է, զի մինչեւ ի ժամանակ սրակին գալ և առնուլ և ուտել՝ է մերձաւորաց փեսային ի տան հարսին, իսկ յետ պատկին՝ այլ ոչ....

Իսկ իններորդ. Սովորութիւն է տանել ի դուռն եկեղեցոյն բազում երգաւոք և նուագարանաւոք, ծնծղայիւոք և քնարիւոք և երիվարսուոք....

Իսկ տասներորդ¹. Սովորութիւն է ի դրան եկեղեցոյն զինահարել² նախ մայրն ի փեսային և ապա քահանային զնարսն ի փեսային և ապա անդրագարձեալ, և երկոքեանն յանձն առնուն....

195_բ Իսկ մետասաներորդ. Սովորություն է զի նարա[ւ]ոլորեալ կարմիր՝ ընդ բամբակի (բնադրում՝ բանրակի) խառնեալ և երեք (բնադրում՝ երեկ) կղի շարամանեալ, մի կուղն կարմըովն խառն և երկուսն անխառն, միայն բամբակ (բնադրում՝ բանրակ), զոր մանեն փեսեղբայրն և քահանային, հարսին քոյրն և քահանային, և նովառ կապեն զիսաչն ի պարտանոցն փեսային....

Իսկ երկոտասաներորդ. Սովորութիւն է, զի արտաքոյ եկեղեցոյն յանձնեն, և ի մէջ եկեղեցոյն պատկեն, և արտաքոյ եկեղեցոյն առնեն զգործ ամուսնութեան....

Իսկ երեքտասաներորդ. Սովորութիւն է պատարագաւ պսակել ժամամտաւ և ամենային, որ ինչ պատարագին կարդն....

Իսկ չորեքտասաներորդ. Սովորութիւն [է] սկսակ անուանել պսակ դնել ի գլուխ փեսային և հարսինն....

196_ա Իսկ հնգետասաներորդ. Սովորութիւն է սպիտակ հանդերձ փեսային սգեցուցանել և խաչ գտատի կապեկ կարմիր՝ յետոյ և տուածի, մանաւանդ զի յետ ընթերցմանն աւրհնել և զայն ըմբեկ տալ՝ զկէսն հարսինն և զկէսն փեսային....:

¹ Հեղինակը սույն կետը ևս 9-րդ է նշանակել, որ զրչական սխալ է: Մենք այն դարձնելով առաներորդ, համապատասխանորեն փոփոխեցինք հաջորդ բռյոր կետերի համարները:

² Հենց այսուղ է, որ երեսում է առեանդման հնագույն ձեի վերապրուկը՝ երիվարներոյ հարս «առնելլր»: Այս շղինահարելու (մենամարտելու, կատակախաղի տալու) սովորության ձերից մեկը 1870 թ. նկարագրել է վանեցի Ա. Կ. Պելլերյանն իր «Գեղջկական» հարսանիք ի Հայաստան գրքույթում, ուր նա ամբողջ հարսնառը դիտում է իր կողմերի մենամարտ — ճակատամարտ: Հարսնաք մասնակից հեծյալ կամ հետիւտն երիտասարդները փայտերով, որերով ու վահաններով զինված, կեղծ պատերազմ են մզում աղջկա կողմի (զյուղի) հարսներների զեմ (էջ 31—49):

Երկու զետրումն էլ առեանդման կամ կին աշխատավոր ձեռք բերելու նախնականդ սովորության փոխարեն հանդես են զալիս արդեն խրախնանական բնույթ ստացած խաղղվարներությունները:

իսկ վեշտասաներորդ. Զի սուրէ է քարշեալ յաշմէ և յահեկէ ի հանելն յեկեղեցոյն....

իսկ երմնատասաներորդ. Զի նստին յաստիճան եկեղեցոյն և ամենեքիան պար տուալ երկրպագեն՝ թագաւոր զնա կարդալով....

իսկ ուրետասաներորդ. Սովորութիւն է այլ ոչ գառնալ ի տուն հ[ար]սին, այլ երթան ի տունը հօրն փեսային....

իննետասաներորդ. Սովորութիւն է տեղի բարձր նստել պետային], որ ակներե... տեսանի... ըմել¹ || մինչև յերեկոյ, իսկ երեկոյն առաջի խրոցն ուտել սակաւ ինչ... ապա ուրիմն անմտութիւն է փեսային առաջի ժողովրդեանն ուտել ինչ:

Քսաներորդ. Զի ե[աւ]թն [օ՞րն] հարսան[ե]անց, որչափ նստի փեսայն յառագաստն՝ մանկունք նախատինս տան հարսնքումը....

Քսանմէկերորդ. Զի յետ եաւթն աւուր... առնի պսակն և ապա հրամայէ մէն] ուժաւորութեան յութերորդ աւուրն....

իսկ զի ճանապարհին կամ յայլ գեղոյ կամ ի միտունն հալածեն, և կայնուն զիկիրճս ճանապարհաց, և խնդրեն ինչս և ոչ թողուն մինչև առնուն...²:

¹ Չեռաղրի այս թերթի նզրերի մաշված ու ոլտառված լինելով՝ որոշ բառեր չեն վերծանվում:

² Ակնարկիմած է այս ուժարությունը, երբ գյուղեղուրս հարսնափ ժամանակ, հարսին զյուղից դուրս բերելիս, տեղացի երիտասարդները խմբովին մի որեէ նպաստավոր ճանապարհի վրա կանգնեցնում էին հարսնափ մասնակիցներին և խմիչքներ ու խորտիկներ էին պահանջում: Մերժում առանալու զեզըըում (իսկ զա հաճախ էր ուստահում, որովհետեւ հակառակը թուլության և ոչ քաջության նշան էր համարվում) աղջկա համայնքակիցները լուրջ կափ էին սկսում, որը հնում երբեմն արյունահեղության էր հասնում: